ԿԱՐԾԻՔ

«Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ

«Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի[1] վերաբերյալ նկատառումները ներկայացվում են ստորև.

1. Նախագծով նախատեսվում է տեղեկատվության ազատության համար պատասխանատու լիազոր մարմնի՝ Տեղեկատվության ազատության[2] հանձնակատարի ինստիտուտի ստեղծումը: Նախագծում ամրագրված է, որ ՏԱ հանձնակատարը պետք է ունենա անկախության երաշխիքներ և առնվազն իրականացնի տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանություն, իրականացնի ՏԱ պրակտիկայի վերլուծություն և լավագույն փորձի ներդրում, ապահովի ՏԱ իրավունքի իրացման վերաբերյալ խորհրդատվություն ինչպես քաղաքացիների, այնպես էլ տեղեկություն տնօրինող մարմինների համար, ապահովի ՏԱ ոլորտի օրեսդրության պարզաբանում:

ՏԱ հանձնակատարի գործառույթներն ու երաշխիքները օրենսդրորեն կարգավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանք չեն կարող նույնանալ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի երաշխիքների, ինչպես նաև գործառույթների հետ: Թե՛ ՏԱ հանձնակատարի ինստիտուտի անվանումը, թե՛ ինստիտուտի գործառույթների նախնական կարգավորումները շփոթության տեղիք են տալիս՝ ՏԱ հանձնակատարի գործառույթները նույնացնելով մարդու իրավունքների ազգային հաստատության գործառույթների հետ, ինչն էլ վիճահարույց է միջազգային չափանիշների տեսանկյունից, ինչպես նաև կարող է հակասության մեջ մտնել ՀՀ Սահմանադրության հետ ներքոնշյալ հիմնավորումներով:

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դերն առավել արժևորվեց՝ մի կողմից բարձրացնելով այդ մարմնի նշանակությունը երկրի իրավական համակարգի կատարելագործման հարցում,

---

[1] Այսուհետ՝ Նախագիծ

[2] Այսուհետ՝ ՏԱ

մյուս կողմից հռչակելով յուրաքանչյուր անձի բացարձակ իրավունքը ստանալու ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածով սահմանվում է, որ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով Ազգային ժողովի կողմից կարող են ձևավորվել ինքնավար մարմիններ: Սակայն դա ակնհայտորեն չի վերաբերում այնպիսի մարմնի ստեղծմանը, որը կարող է կրկնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները և դրանով հանդերձ խորհրդարանի կողմից ընտրված ինստիտուտի գործունեությունը:

Ընդ որում, ՀՀ Սահմանադրությունը հռչակում է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը՝ իբրև իր դերով ու գործառույթներով պայմանավորված, անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված եզակի իրավական մեխանիզմ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի իրավասությունը ՀՀ Սահմանադրության 191-րդ հոդվածի ուժով տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու՝ օրենքով երաշխավորված բոլոր իրավունքների և ազատությունների պահպանության վրա:

ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլխում 51-րդ հոդվածով սահմանված է յուրաքանչյուր անձի՝ տեղեկություններ ստանալու իրավունքը:

Հետևաբար, տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության և տեղեկատվության ազատության ոլորտում անձանց խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունն այնքանով, որքանով այն ուղղված է անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ տեղեկություններ ստանալու իրավունքի լիարժեք ապահովմանը, վերաբերում է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի իրավասությանը:

Նշենք, որ առկա են մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնք շեշտում են մեկ Օմբուդսմենի ինստիտուտի նպատակահարմարությունը: Մասնավորապես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարության իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության տնօրինության 2015 թվականի հոկտեմբերի 26-ի Հայաստանի վերաբերյալ համատեղ կարծիքում, խոսելով ռազմական օմբուդսմենի ստեղծման հնարավորության մասին, նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է ձեռնպահ մնա օմբուդսմենական նոր հաստատություններ ավելացնելուց, եթե մարդու իրավունքների կամ հիմնարար ազատությունների պաշտպանության համար դա խիստ անհրաժեշտություն

չէ: Ըստ այդ կարծիքի՝ այդ մարմինների ավելացումը կարող է անհատներին հանգեցնել շփոթության իրենց հասանելի պաշտպանության հնարավորությունների առումով:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը Եվրոպայում օմբուդսմենի ինստիտուտի ամրապնդման վերաբերյալ 2013թ. թիվ 1959 բանաձևում նույնպես արտահայտել է հիշյալ դիրքորոշումը: Ընդ որում, ԵԽ Խորհրդարանական վեհաժողովը դա արել է՝ հիմք ընդունելով ԵԽ Վենետիկի հանձնաժողովի, ինչպես նաև ԵԽ Նախարարների կոմիտեի դիրքորոշումները:

Ղազախստանում Օմբուդսմենի ինստիտուտի բարեփոխումների վերաբերյալ իր նախնական կարծիքում, օրինակ, Վենետիկի հանձնաժողովը, քննարկման առարկա դարձնելով երկրում Երեխաների իրավունքների պաշտպանի ինստիտուտ նախատեսելու և վերջինիս գործունեության մոդելի ընտրության հարցը, առավել նախընտրելի է համարել այդ մասնագիտացված Օմբուդսմենի գործառույթների իրականացումը ազգային Օմբուդսմենի միասնական ինստիտուտի շրջանակներում՝ վերջինիս կառուցվածքում հատուկ ստորաբաժանում ստեղծելու և/կամ ոլորտի համար պատասխանատու տեղակալ ընտրելու միջոցով՝ հաշվի առնելով ազգային օմբուդսմենի միասնականացման (կոնսոլիդացման) և կայացման փուլում գտնվելու հանգամանքը: Վենետիկի հանձնաժողովն այնուհետև հավելել է, որ այդպիսի հատուկ գործառույթը ենթադրաբար կշահի՝ պայմանավորված ազգային ինստիտուտի կարգավիճակով և լեգիտիմությամբ, և այդպիսի կապը գործնականում կարող է հանգեցնել և՛ գործառույթի, և՛ ինստիտուտի հզորացմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Ուշագրավ է նաև, որ Օմբուդսմենների ինստիտուտների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքների հավաքածուի (CDL-PI(2016)001, Ստրասբուրգ, փետրվարի 5, 2016թ.) մեջ նշվում է Բոսնիա և Հերցեգովինայի Մարդու իրավունքների օմբուդսմենի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 2015 թվականի թիվ CDL-AD(2015)034 կարծիքը, համաձայն որի Վենետիկի հանձնաժողովը սկզբունքային կերպով մշտապես խրախուսել է Օմբուդսմենների թվի նվազեցում՝ որպես վերջնական նպատակ հետապնդելով մեկ Օմբուդմեն ունենալը:

Ավելին, ՏԱ համար պատասխանատու լիազոր մարմնի՝ Տեղեկատվության ազատության հանձնակատարի ինստիտուտի համար ընտրված անվանումը շփոթեցնող կարող է լինել, քանի որ միջազգային պրակտիկայում տարբեր եվրոպական պետություններում մարդու իրավունքների ազգային ինստիտուտները կրում են «հանձնակատար» անվանումը (օրինակ՝ Լեհաստան, Հունգարիա):

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ